

սող լինի թէ ուրեմն աւելորդ է գործիքը. բայց ոչ. առանց նրան աշուղդ կէս-մարդ է, առանց թև թռչուն է, Սաղի ու ջու-
թակի ընկերութիւնը նրա բերանը լեզու է դնում ու հոգու մէջ
կրակներ ժառանգութեան օրօրող ձայնի տակ նրա մտքերը հեշտ են
դարսւում ու հեշտ էլ երգ շինւում: Սովորութիւն է այդ, դարա-
ւոր սովորութիւն: Մինչև անգամ եթէ աշուղդ դանւում է մի
այնպիսի տեղ, որ հետը չի լինում իւր սաղը ու նրան խնդրում
են մի անպատրաստից բան ասել՝ նա անպատճառ պէտք է ձեռ-
նափայտը կամ մի այլ առարկայ սաղի գիրքով ձեռքերի մէջ պա-
հէ և իբր անէ, որպէս զի կարողանայ մի խօսք ասել: Այս բանը
պարզ երևում է հին աշուղների ու նրանց հեթաթների մէջ:

§ 16 Որպէս երգիչ. Որպէս բանաստեղծ, որպէս երաժիշտ
նայելուց յետոյ՝ այժմ հայ աշուղին նայենք որպէս երգիչ, նեղ
մաքով՝ որպէս երգող:

Գարձեալ հին շրջաններից ոչ մի բան յայտնի չէ մեզ, թէ
ինչպէս են երգել, օրինակ Գողթան երգիչները, կամ հին տաղա-
սացիները, ինչ գիտազօն ու ոյժ է ունեցել նրանց ձայնը և վեր-
ջապէս թնշ տեսակի ձայն է եղել այդ: Լաւ ձայն ունենալը, ի
հարկէ, պատահական բան է, մարդու մոտաւոր ընդունակութիւննե-
րի հետ կապ չունի, այնպէս որ գիցուք նշանաւոր աշուղդ կարող
է լաւ ձայն չունենալ, իսկ աննշանը, անշնորհը—ընդհակառակը:
Տաղասացիների շրջանում եղել են անշուշտ լաւ երգիչներ, լաւ
ձայնաւորներ, չէ՞ որ նրանք մեծամասնութեամբ հոգեկորականներ
են եղել. իսկ այն ժամանակները հոգեկորական լինում էր առհա-
սարակ նա, ով լաւ ձայն ունէր, ով լաւ տաղ ու շարական ասել
գիտէր: Բայց մի կարող է մի որոշ բան ասել թէ նրանցից որը
ինչ տեսակ ձայն է ունեցել կամ ինչպէս է երգել: Նայենք ուրեմն
գարձեալ մեր նոր շրջանների երեք նշանաւոր աշուղներին:

Սայեաթ-Նովէն լաւ ձայն է ունեցել. դեռ ջուլհակ ժամա-
նակը շիր մեքենայի առջև, հորում նստած՝ մաքուքի ձէնի վրայ
առաւօտեան հանած խաղն գեղգեղում է եղել գիշերն իւր քաղցր
ձայնով իշխաններու բարձր ու լէն դարպասումն—գրում է Ախ-
վերդեան: Գիտենք որ նա իւր լաւ նուագածութեամբ ու ձայնով
մուտք է ունեցել վրաց արքունիքում: Ինքը աշուղն էլ իւր շխաղը
գնահատել է և լսել է տուել իւր սիրեկանին:

«Մագմմ մեռաւ Սայեաթ-Նովէն՝ տկանից խաղին կարօտ է՝
Ինչպէս երգերը, այնպէս էլ նուագելն ու երգելը Սայեաթ-Նովի
հոշակը բարձրացրել են իւր ժամանակին. նա յայտնի է եղել ա-
ւելի որպէս լաւ սաղանդար:

Վերին աստիճանի լաւ ձայն է ունեցել Շիրինը: «Լաւ ա-

սելով աշուղների ձայնը չըպէտք է հասկանալ մշակուած, կատարելագործուած, արուեստի ենթարկուած ձայն, այլ ուժեղ, քաղցր, զգացմունքով լի և զուրկանալ։ Աշուղի զգացմունքը, այն ևս կոյր աշուղի, չափել կարելի է միայն այն ժամանակ՝ երբ կը լսես նրա երգեցողութիւնը, և երբ հասկանում ևս նրան, թէ ինչ է կատարուում նրա ներսը։ Այնպիսի սրտակտուր, այնպիսի սիրտ մորմոքող է այդ կոյր աշուղների հասարակ ձայնը, որ փշաքաղում է լսող մարդու սիրտը։ Շատ անգամ մենք պատահել ենք դաւաններում կամ հենց Թիֆլիսի գաւթներում ման եկող Թափառական կոյր աշուղներին երգելիս. որոնց բուռն զգացմունքը, բողբոջ, վիշաբ, աղերասնքը միախառնուելով այնպիսի մի ձայն են առաջացնում, որ եթէ չամաչենք ասել, կարելի է արատաւել։

Ինչպէս է երգում Ջիւանին։

Ով տեսել ու լսել է նրան, մեղ հետ կասէ՝ որ նա նախ զուխը դէպի ձախ, ջութակի գլխին թեքելով յորդորացնում է նուագածուքիւնը աղեղը ուժգին քսելով լարերին, յետոյ զլուխը սովորականից բարձրացնելով՝ երեսին մի քաղցր ժպիտ է տալիս ու յանկարծ մի ուժգին «Անխ» զոռալով՝ երևի նրա համար թէ «ուշադրութիւն դարձէք», սկսում է երգը, խօսքերը պարզ հատոր-հատոր արտասանելով։ Նա չի երգում, նա խօսում է, բայց խօսում է աշխուժով, բարձր ոգևորութեամբ և հեղինակաւոր ձայնով, անկասկած վստահ լինելով իւր ասածների վերայ։ ... Յանկարծ Ջիւանիի ձայնը բարձրացաւ, զօրաւոր, ներդաշնակ ու մանաւանդ զգայուն։ Երգած պահուն նոյն մարդը չէր, ինքը զինքէ դուրս կելնէր ու կը վերանար, հոգեկան բան մը կը դառնար, առանց արուեստի, առանց ճիշդի կը սահէին երգերն իր շրթունքներէն, ձայն ու նուագարան քիչ կուգային կարծես իրեն արտին բոլոր խանդը, հոգոյն բոլոր իղձը արտայայտելու... զրում է նրան տեսնող-լսող մեր թիւքբահայ խմբագիրներից մէկը ¹⁾։ Եւ ճիշտ որ առհասարակ աշուղները, մասնաւորապէս Ջիւանին երգելիս էլ, նուագելիս էլ մոռանում են որ իրենք երգում ու նուագում են, նրանց ուշքն ու միտքը կենտրոնացած է լինում խօսքերի վերայ։ Կարծես նրանք ասում են «դուք լսեցէք թէ ինչ ենք ասում, ոչ թէ ի՞նչպէս ենք ասում»։

Ինչ եղանակների են յարմարեցնում աշուղներն իրենց երգերը, այդ մասին խօսելու ենք հետեւալ գլխում, այստեղ այս ասինք, որ ինչպէս առհասարակ արեւելեան, այնպէս էլ հայոց աշուղական երգերի ընդհանուր բնաւորութիւնը տխուր է, ծանր, քաշ,

¹⁾ «Երեւելք» 91 մայիս 18.

հեղձուկ, մելամաղձիկ. այնպէս որ տեղ տեղ աւելի լալիւնի է նմանութան երգի. իրաւ որ դրանք երգեր չեն, այլ ահա ու հառաջանքների մի մեծ շարք, որը ու կականի միմեանց յետեից կրկնուող արձագանքներ: Այդ է պատճառը, որ երբ օտարները լսում են, կամ գաշնամուրի վրայ ածում՝ նախ ոչինչ չեն հասկանում, երկրորդ այն չի դուրս գալիս, ինչ որ պէտքն է, ինչ որ մենք, արեւելցիներս ենք հասկանում:

Ինչպէս յայտնի է, հայերի մէջ քան ձայն ունեցող բաւականին հազուադէպ է. մեծագոյն մասը բարի տալիս և աւելի անօր են զանազան տեսակի, հետեւապէս և մեր աշուղներն էլ եղել են այդ ձայների տէր: Եղել են երբեմն այնպիսի դարմանալի բարձր և զիւ ձայն ունեցողներ, որ յետ չեն մնացել հուշակաւոր թուրք Հիւսէյնից: Օրինակ աչըզ Խրթըզի ձայնին կարող էր նախանձիկ մայրաքաղաքների ամեն մի դերասան-երգիչ:

Երբ երաժշտական դպրոցում և կոնսերվատորիաներում երգեցողութիւն են աւանդում, պրոֆեսորը, ինչպէս յայտնի է, հետեւում է իւր աշակերտի և կանգնուածքին, կուրծքը և գլուխը բռնելու ձևին, բերանը բանալու չափին և այլն: Ո՛վ պիտի հետեւէր աշուղին, որի դպրոցն ու քննենականաբար եղել է սրճաբանն ու հրապարակը, տեսնողն ու լսողն եղել է ամբոյն: Դրա համար և աշուղներ կան, (որոնց մենք ճանաչում ենք) որ երգելիս այնպէս են խրպոտ ու անախորժ ձայներ հանում, այնպէս են ծամածռում քիթ ու բերանը և դէմքին տալիս կարրեկատուրային կերպարանք, որ փոքրի շատէ գեղեցկի ճաշակ ունեցող մարդը գծուարութեամբ կը կարողանայ համբերել: Ոմանք դիտմամբ են տնում այդ, կարծելով իբր թէ լաւ բան են անում:

Ձենք մեղադրում այդ մարդկանց. քանի երիտասարդ են եղել, ուղղակի, խրատող չեն ունեցել, այժմ էլ ուշ է այդ մասին մասնելը, թող այդպէս անցնեն, գնան, դրանք էլ ունեն իրենց առատութիւն, իրենց մշտական լսողները, ուկնդիրները:

§ 17. Որպէս դերասան. Աշուղի՝ բանաստեղծ, երաժիշտ, երգիչ լինելը ամենքս գիտենք. բայց դիտենք և ճիշդ որ աշուղը և գերաստն է, գէլլամատէօն է: Նա մի ժամանակ երգելու կամ պատմելու միջոցին և խաղացել է, այսպէս ասած ներկայացրել է, որ յիշեցնում է մեզ թատրոնի սկզբնական փորձերը: Հնագոյն ժամանակներում Դողթան երգիչների մէջ արդէն, ինչպէս պատմիչների խօսքերից կարելի է հասկանալ, եղել է այդ բանը: Ահա բացատրութեան նեղութիւնը թող յանձն առնի Էմին: «Ըստ մեզ—ասում է հոգեւոյս գիտնականը—գուսանական նշանակէ ոչ ծրգ արժանագրեալ (զոր նոր բառարանն չը գիտեմ էր ժամն մեկնա-